

# ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

— ԲԱՆԱՍՏՐԱԿՈՆ - ԳԻՏԱԿՈՆ - ԲԱՐՈՅԵԱԿՈՆ —

0326 - 0322

ՀԱՅԱՐ

84

Ա. ՂԱԶԱՐ

1926

ՄԱՅԻՍ

ԹԻՒ 5

## ԲՈՆԱՍԻՐԱԿԱՆ

Պ.Ա.ՏՐԻՍ.Ր.Ք.Ռ.Ի.Թ.Ի.Խ.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏՐԱՊՈԼՏՈՒԹԻՒՆ

## ՀԱՅՈՑ ՄԷՋ

(Չարումակութիւն, տես Բազմավէպ 1926, էջ 88)


6. Եթէ կարենայինց ենթադրել՝ թէ չայոց դարձին ժամանակ մեծ Հայաստանի մէջ եպիսկոպոսներ չգտնուելուն պատճառաւ, լուսաւորիչ ստիպուած էր որ և է տեղ մ'երթալ ձեռնադրուելու, և կեսարիա զնաց, հարց պիտի ծագէր՝ թէ իւր յաջորդները բազմաթիւ եպիսկոպոսներէ շրջապատուած, ինչու նոյնպէս հն զնացին, և ինչու հոն միայն: — Փաւատուի վկայութիւննք անոնց մասին՝ ձեռք առնուլ, ձեռնադրութիւն մը թէ «Կեղակարծութիւն» և թէ «բացառիկ» որով և ստոյգ պարագայ մը նկատել, կամ այլ ընդ այլոյ մեկնութիւն մը յերիւրել<sup>1</sup>. Կամ դաշնակերջ եկող հետևակ պատմիչները ժամանակակցէն աւելի տեղեակ համարիլ, և

անոնց լուութիւնն ուրիշ ձեռնադրութեան մը նկատմամբ՝ «զօրաւոր փաստ» հոչակել ժամանակակցին վկայութեան դէմ<sup>2</sup>. Կամ պատմչին շորրորդ անզամ պնդելէն տաղուկացած՝ «չուզել այլ ևս անդրադառնալ այդ ձեռնադրութեան խնդրոյն վրայ», որ այդքան նեղը կը զնէր զի՞նքը, և իսկոյն զջալ ու սկսիլ նոր կարկատանց մը՝ «Ներսեսի և զի՞նքը ձեռնադրող Եւսերիսի թուականաց անմիաբանութեան մասին», որ փաստերով հերցուած է գելզերէ<sup>3</sup>. այս գործը, որպէս զի ճիշդ սահմաննեց, ամէն բան ըսել է՝ «չ ինչ ըսելու

1. Օրման. Աւոր 1146. — 2. Աւոր 156. — 3. Աւոր 169. — 4. Գեւ. Փ. 42.

ԲՅ ԾՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐքԱՐԱԾ



Digitized by Google

համար, ցուցնել է՝ թէ ո՞րքան զժուարին կացութեան կը մատնուի մարդ, երբ փորձէ պատութիւնը հեռացնել պատութենէն-և վերջապէս՝ զՓաւատոս ամրապեցէլ է իւր պատուանդանին վրայ:

ինչու ուրեմն, կը զառնամ հարցնել, այնցան հայրապետներ անընդհատ գնացին ի կեսարիա: Պատշաճութեան կամ սկսած սովորութեան մը պարզապէս հետեւելու համար արգեօք: Բայց չափազանց կը լինէր այդ միօրինակութիւնը և անմենակի: Ոչ պատճառը կեցած է Հեռնդուի թղթին մէջ: «հաստատեալ կայցէ վկայութիւն» ի կեսարիա ձեռնադրուելու Ռաքեմն պայման մ'չ որ կը տանի զիրենց: և պայմանը կ'ենթադրէ ծանուցալ իրատենք մը մէկ կողմէն, և պարտք մը միւս կողմէն:

7. Այդ ստիպման սուուգութիւնը կը հաստատուի նաև վկայութեամբ յոյն գրչի մը, Գեղասիրո կիւզիկեցւոյ, հեղինակ Նիկոյ ծողովոյն պատմարեան (գրուած 475-771 միջացին), որ անոր նշանաւոր հարց կարգին կը յիշէ Լուսաւորչի ձեռնադրիչը, «Ղւննդիռ կեսարու կապարովվկիայ, զարդ եկեղեցւոյ Տնառն, որպէս և այնոցիկ (եկեղեցեաց)» որ ի կապարովվկիա, ի Գաղատիա, ի Պուստոս Դիոսպոնտիայ, ի Պափուանիա, ի Պողմոնիականն Պոնտոս, ի Հայաստան Փոքր և ի Մեծ» (<sup>1</sup>Արթևեան մարձն ու մեցալին<sup>2</sup>): իւր իշխանութիւնը կը տարածուէր ուրեմն այդ բոլոր վիճակաց վրայ, որոց մէջ էր և ամրող հայ աշխարհը: Հայաստանեայց Արույն հեղինակը կիւզիկեցւոյն խօսքերը ծամածեց, յեցած զրչագրական սիմալի մը վրայ: Հոռվէական կայսերութեան մարզացուցակը, որ պատրաստուած է Եղարուսիզը<sup>3</sup>, Պոնտոսի կուսակալութեան ներքէ կապարովվկիոյ գաւառներ կը նշանակէ՝ «Հեղենոպանոս, Պողմոնիականն Պոնտոս, Ա և Բ կապարովվկիա, Ա և Բ Հայաստան», որոց վերջին նոյն ցուցակին

«աղաւաղեալ» օրինակ մը փոխեր է ի «Փոքր և Մեծ Հայաստան», ըստ Օրմանեանք և հետեւցուց՝ ոք այդ անուանը հոմանիշ էին, և Գեղասիրո աբ կը հասկանար Ա և Բ Հայաստանը<sup>4</sup>, այսինքն կապաղովվկիոյ սահմանակից երկու հողամասերը:

Կը պատասխանեմ: Եթէ մարզացուցակին երկրորդ օրինակը սիմալիցիր է, ուշեմն տղես գրյի մը ձեռքին ելած է, զասն զի սիմալը տգիտութեան յատուկ է. և տղիտի մը համար շատ զիւրին էր անունները շփոթել, կամ իրեն ծանօթ անուն մ'անծանօթին տեղ զնել, վերջինը պարզելու կամ ճշգելու նպատակով: Բայց ոչ բնական ողջմտութիւնը և ոչ մարդկային սովորութիւնը կը ներեն՝ նոյն աշխարհին երկու գաւառաց կամ նահանգաց միանգամայն տալ մի և նոյն անունն՝ առանց որոշիչ վերադրի մը. զոր օրինակ «Հայաստան» միայն ըսել, և ոչ «Ասային Հայաստան», Երկրորդ Հայաստան» և որ ըստ կարգի: Արդարին թէ յոյն և թէ հայ զրականութիւնը կը ծառանան Օրմանիանի պահանջած հոմանշութեան դէմ, ինչպէս Հ. Բ. Սարգիսեան ալ զիտել տուաւ<sup>5</sup>: Ամբաւ են հելլէն զրչաց վկայութիւնը, որոցմէ շատ ցայտուն է Ստրաբոնի այս սահմանը<sup>6</sup> թէ Եփրատ գեաը «բղիելով ի հրիսիսային կողմանցն Տաւրոսի, հոսի ընդ արևմուտա Հայաստանի» որ Մեծն կոչի, մինչեւ ցփոքին, ունելով զսա ընդ աջմէ<sup>7</sup>: Այսպէս աշխարհն համօրէն Եփրատի երկու կողմերը գինգուեր է միշտ Փոքր ու Մեծ Հայքը, և ոչ բնաւ այլուր:

Այս կրկնակ բաժանումն Յոյներէն սովորեցան մեր մատենազիրը ևս, և Խորենացւոյն Աշխարհազրութիւնը, որ հետևողութիւնն է Պաղոմէոսի, նոյնպէս Փոքր Հայոց ու Մեծ Հայոց բաժանարար սահմանն կը զնէ զեփրատ՝ Այսպէս և «Տրդատ արքայ (կամ արքայութիւն, զօրք երկրին, թագաւորք, աթոռ կաթողիկոսութեան)

1. Գեր Բ, Ա. Էւ: — 2. ՀԱՅ. Darem. Province, 721: — 3. Ալ: 728: + 4. Արտ Հյուս.

40-42: — 5. Սար. Աւար. 193: — 6. Սար. Ալի. ԺԱ, 42, 8: — 7. Խորեն. 606:

Հայոց Մեծաց<sup>1</sup>՝ մարզացուցակին կամ Խորենացւոյն՝ Երկրորդ Հայաստանը տեսած չեն բնաւ. «Ո ալ իրենց աշխարհն այս երկրորդ անուամբ մկրտուած է երբեք: Միանգամայն իրեն տրուած մեկնութեան չափ անտեղի բան պիտի ընէր կիւզիկեցին, Ա և Բ Հայաստանը միայն զնելով Հենադիոսի վիճակին մէջ, և զրոկելով զայն Գ Հայաստանէն, որ նոյնպէս անոր կը պատկանէր, զննուելով յայնկոյս Եփրատայ՝ Փոքր Հայոց մէջ, ուր չէր հասնէր Հայոց կաթողիկոսութեան սահմանը, ինչպէս պիտի տեսնենց յետոյ: Ոչ, Օրմանեանի մեկնութիւնն երազ մ'է միայն, յարմար «սիալ» զրողի և սիալ տեսնողի. Փ ճշմարիտ է Գեղասիսով վըկայութիւնը՝ թէ Փոքրին հետ Մեծ Հայց ևս իրաւասութեան ենթարկուած էր կեարիոյ աթոռին՝ «ուստի հանդերձեցաւ նմա պատրաստութիւն շինութեան ձեռնադրութիւն<sup>2</sup>»:

8. Սոյն պատմական ճշմարտութիւնն կը հաստատուի նաև ուրիշ փաստերով. և նախ Փաւատոսի մէկ տեղեկութեամբ: Ա. Ներսէս երբ զնելի տարապարտ սպանման պատճառաւ գտնեցաւ Արշակայ հետ, սա ուզեց անոր տեղ կաթողիկոս զնել զննակ: և «Հրաման տայր կոչել զամենայն եպիսկոպոս Հայոց աշխարհին»՝ որպէս զի զան ձեռնադրեն այդ նոր թեկնածուն: իւր Կոչին հապատակեցան երկու հոգի միայն, Ազնեաց ու կորդուաց եպիսկոպոսները<sup>3</sup>, իսկ ընդհանուր եպիսկոպոտութիւնը չուզեց զուզեց զործակցիւ արքային՝ հակառակ իրաւաց կեսարիոյ աթոռին՝ զոր կը մեծարէր, և որուն որոշեց հաւատարիմ մալ, ի հենուկս Արշակայ խիստ հրամանին: Այսպէս հայ արքունեաց այս առաջին փորձը՝ բաժնելու մեր հայրապետութիւնը կեսարիայէն, ամխողութեան մասնուեցաւ: Չոնակ հակառակաթոռ մը նկատուեցաւ. իսկ Ներսէս առժամապէս լոեց ու մեկուսի քաշուեցաւ, պահելով միշտ իւր իրաւանքը, զոր յետոյ Պապայ օրով վերսատին սկսաւ ի զոր զնել և առաջնորդել հօտին:

9. Արշակայ որդույն պահուած էր՝ վերջնական հարուածը տալ այդ անողոք եկեղեցականին, կեսարիոյ այդ նախկին սանին ու նայ բարձերու յեղաշըջողին, և լրացնել հօրը գործը: Արշայական սեղանին վրայ թունալից բաժակ մը լուցուց անոր հրեցէն լեզուն: Հարուածը միանգամայն կապաղովվիոյ նովուապետութեան դէմ էր. և Պապ չկրկնելու համար հօրը ձախողած փորձը, ուղղակի «եպիսկոպոս» մը՝ զի ուսւածիկ՝ ինցնազիլարար առաւ յաջորդ դրաւ սրբոյն: Բայց ինքն ալ սիսալցաւ հաշուին մէջ, Լսեց, Կ'ըսէ Փաւատոս, կեսարու եպիսկոպոսապետը, որ այն ժամանակ երեւել ս. Բարսեղն էր, այդ կարգագործիւնը, և «ոչ՝ որպէս սովորէին՝ առ հայրապետն տանել ի կեսարիա ի ձեռնադրութիւնն»: և ցան զայս աւելի ծանրը, — զի Յուսիկ արդէն անկարու էր ձեռնադրութեան, — Հայոց հայրապետ կարգուեր էր «առանց նորա հրամանի»: Եւ «իրքս այս մեծ զարմանալով ցաման եղեալ հայրապետին կեսարու», ցամուն մը՝ որ քաղաքավարականէն շատ աւելի զօրաւոր կապ մը կը պահանջէ երկու աթոռոց մէջ, նահանգային ժողով կը կազմէ: «և զրեցին թուղթ ցամամար մեծապէս» Պապայ ու նայ եկեղեցոյն, «և լուծին զիշխանութիւն կաթողիկոսութեանն»: այս ինքն՝ թէ հայրապետը «մի իշխանցէ ձեռնադրել զեպիսկոպոսն Հայոց»: Այս գործով նորամուս ոտնձգութիւն մը չէր ըներ կեսարիոյ աթոռը Հայաստանի մէջ, այլ կը գործադրէր իւր պատմական իրաւանքը, զոր հայ կղերն ալ Կ'ընդունի հնութեամբ, ըմբռաստանալով Պապի կարգագործիւն դէմ. այնպէս որ «յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց զեպիսկոպոսն ձեռնադրել»: և բոլոր ընծայեալք «երթային ի քաղաքն կեսարացւց և անդ լինէին եպիսկոպոսց»: իսկ կաթողիկոսն անոնց «ի վերոյ միայն նստէր, և հաց օրհնէր թագաւորացն»:

1. Արտ. 49, 106, 110, 128, 600, 606, 614, 643.—  
2. Խոր. 608. — 3. Արտ. 617. — 4. Փառ. 128.

Այսպէս թուափէ՝ ի բնէ իսկ երկշոտ, «կայր ի լոռութեան և ի հանդարտութեան զամենայն աւուրս կենաց իւրոց<sup>1</sup>», Այնքան յստակ են այս տողերը, որ մեկնութեան չեն կարօտիր ինձմէ:

10. Փաւատոսի այս զգրդիչ տեղեկութենէն զայթակած, չուզեց հաւատալ Զամշանը, «աննոռնիս» և ազգիս դէմ «յատելութենէ» համարելով զայն<sup>2</sup>, լինոր արձագանգ տուաւ Օրմանեան, պատմչին զրածներն որակելով «մտացածին եղին բուացաղ» մը<sup>3</sup>. Գան զի զգաց՝ որ այս տեղեկութիւնը սովորական բառախաղով մը չէր լուծուեր: Հին դպրոցը, սկսեալ Պ. Փարակեցւոյ ժամանակէն<sup>4</sup>, ընդհանրապէս խոժոռ նայեր է Դ դարու այդ պատմագրին, անոր տուած ծանօթութիւնը գտնելով «անհանոյս լսողաց»<sup>5</sup>: Սակայն արդի եւրոպահայ զրականութեան մէջ իւր արժանաւոր տեղը կը բռնէ արդէն՝ մեր ամրող երախտազիտութեան արժանի հեղինակդ, հայ լինի թէ յոյն, որ տոհմային պատմութեան Կարենորագոյն շըրջանին ականատես, միակ ու լաւագոյն ազրիւրն է. և որոյ մէջ թարգմանիչն յետոյ դրեր է բաժին մ'իւր երևակայութենէն, զոր խոհականութեամբ զտելով, կ'ունենանց ստուգագոյն տեղեկութիւնները: Վերջիններէս է նաև ներսեսի ապօրէն յաջորդին կրած կանոնական պատիքը, որոյ հաջորդիչ կրկին թղթերը թէպէս կրոսուած, բայց Հայաստանի մէջ անոնց ստեղծած վիճակը բաջ կը ճանաչենք ուրիշ աղբիւրներէ:

11. Փաւատոսի զօրաւորագոյն վկայն է նոյն ինքն յիշեալ պատիքը սահմանող ս. Բարսեղը՝ իւր անկորուսա մնացած միւս թղթերով: Ասոնց մէջ Կարենորագոյնն է «առ Ցերենտ կոմս» զրածը, որուն բախտ ունեցայ հանդիպելու՝ նոյն հօր գործերը խուզարկելով<sup>6</sup>: Սա՝ Փաւատոսի և Խորենացւոյն ալ ծանօթ համանուն յոյն

զօրավարն է՝ որ բանակով մ'եկաւ թագւորիցուց զՊապ Հայաստանի, պաշտպան կեցաւ միշտ անոր քով, և յետոյ սպանեց՝ ի պատիժ անոր պատրաստած զակին Յունաց դէմ<sup>7</sup>: Եւ այդ բոլոր շրջանին, որ տեսք եօթը տարի<sup>8</sup>, Ցերենտ հաստատուած էր «յերկրին Հայոց» արբային մօտ, զոր և մահացուց Բազրեկանդայ մէջ, ուր հայ և յոյն բանակներն իրարու քով կը զըտնուէին<sup>9</sup>: Այդ այդ զօրավարը, որ Բարսեղի հին բարեկամն էր, ս. Ներսեսի սպանութենէն թիչ յիշոյ՝ կայսեր հրամանաւ կեսարիոյ արքակիսկոպոսին կը զի՞ եալիս կոպոսներ տալ՝ առանց հեղինակաւոր կաթողիկոսի մնացած Հայաստանին. և ինքն իսկ կը նշանակէ անուններ, որոց մէջ կ'երկի թէ յոյններ ալ կային: Այս կը լինէր 372 թուին:

Ա. Բարսեղ, խստութեան հետ նաև ողջամիտ մարդ, կ'ընդդիմանայ օտար թեկնածուաց՝ իրրի անյարմար առաջնորդութեան Հայոց, և կ'ըսէ: «Արդ ո՞րպէս մարթիչ ինձ, զլուխդ պատուական, հնազանդել հրամանացդ, և տայ եպիսկոպոսնս Հայաստանի. այնքանոյ բարեկամիդ իմոյ և զործակիցի յոյր ձենն ակն ունէի գտանել ինձ արժ պատկանաւորս, այնու զի ուր բնակեսի՝ ոչ պակասն և բարեպաշտը և խոհականց և հմուտը լեզուին, և որ այլոց ևս սովորութեանց իւրոյ ազգին տեղեակ իցէ»: Հոդ յիշուած Հայաստանի մասին դիտելի է Գեղեցիր Ցուռնորիզի հոտ<sup>10</sup>, թէ Բարսեղ իւր թղթեց մէջ լոկ՝ 'Արևելով կ'իմանայ Մեծը, և Փոքրը յայտնապէս կը կոչէ՝ 'Արևելա միքրէ: Արդէն Ցերենտի բնակավայրն ալ մեծ Հայրն էր՝ ըսինց: Եւ ահա այդ անզերեփատեան նահանգին եպիսկոպոսները կեսարիայէն կը մեռնաղըռուին նաև ըստ Բարսեղի, որ անոնց ընտրութեան մէջ իրեն գործակից ունի Ցերենտ բարեկամը: Ուստի Փաւատոսի պատմածը բացարձակ ճշմարտութիւն էր:

1. Փաւ. 226-27. — 2. Զամ. Ա, 870: — 3. Օրման. Արտ. 225-26. — 4. Փարո. 11, 14: — 5. Կոյն. 14: — 6. Patrol. Graeca, օտ. 82. առ. 99.

7. Փաւ. 185, 187, 201, 203, 232. Խորեն. գ, լու, լէ, լբ: — 8. Խորեն. գ, լբ: — 9. Փաւ. 281-82. — 10. Գևզ. Փ. թ. 180. Tourn. 490.

12. Մեր պատմիչն իրեն նոյն քան  
զօրաւոր վկայ մ'ալ ունի նոյն ինքն ներ-  
սեսի սպանչին զործը, Պապ տեսնելով  
բոլոր հայ եպիսկոպոսաց երեսդարձու-  
թիւնն իւրմէ և իւր կարգած հայրապետին,  
ստիպւեցաւ ինքն ալ խոնարիլ կեսա-  
րիոյ ժողովին կարգադրութեան առջն, և  
իւր ընտրած եպիսկոպոսները ձեռնադրուե-  
լու յանձն հոն, Զայս կը հաստատէ ս. Բար-  
սեղ իւր զոյդ թշթերով, զորս զեթեց յաջորդ  
տարին (373ին), առ թէոդոտոս հպատակ։  
Նեկոպոլիսի Փոքրուն Հայոց, և առ Մեծի-  
տիոս եպս։ Անտիռայ<sup>1</sup>, և զորս համա-  
ռուեց նաև Հ. Գեղեցիր<sup>2</sup>, Առաջնոյն մէջ  
այսպէս կ'ըսէ եպիսկոպոսապետը, «Գի-  
տասնշիր ես՝ զի Փաւատոս եկն առ մեզ  
թղթովց ի Պապայ, ոյց հայցէին՝ զի ձեռ-  
նադրեացի յիշիսկոպոս։ Այլ յորժամ ի  
բարեպաշտութենէ քումէն և յայլց եպիս-  
կոպոսաց ինդրեցաց վկայութիւնս, արհա-  
մարէնց զմեօց զնուա առ Անթիմոս, և  
ի նմանէ՝ առանց զեկուցանելոյ մեզ՝ ըն-  
կալեալ զեռնադրութիւն, դարձ արքա»։  
Խակ Մեծիտիոսի այսպէս կը զբու։ «Կամիմ  
ևս բարեպաշտութեան բռյին զիտել՝ զի  
Փաւատոս որ յարեալ է ի Պապ, յեղորէն  
Անթիմոսէ ձեռնադրէալ է յիշիսկոպոս՝  
առանց ընդունելոյ զվկայութիւնս, ի տեղի  
պատուական եղորն կիրդի, այնպէս զի  
Հայաստան լցեալ է խոռվութեամբ»։

Կը տեսնենք յայսնապէս՝ որ Կղերա-  
կան դասր, ճակատած թագաւորին զէմ,  
թափուր մասցած վիճակի մը թեկնածու  
կը զրէէ զկիրեղ՝ ձեռնադրուելու, և Պապ՝  
իւր հանելին Փաւատոս։ Սա սրտնեղած  
թարսի կատարելի օրինական քննութե-  
նէն, ուսկից կ'երեկ թէ վասիելու պատ-  
ճառա ունէր, կը զիմէ թէ կապազովկիոյ  
ոստանին՝ Ծիանէի մետրապոլիտին Անթի-  
մոսի, որ նախանձորզ մ'էր Բարսղի, և  
ձեռնադրութիւն կը ստանայ. այսու իսկ  
հաստատելով՝ թէ Հայաստանի մէջ ձեռ-  
նադրէ չկար իւրեն, Յուսիկ ինքնին ձե-  
ռնապահ մաւլով, և թէ կ'ուզէր ձեռ-

նազրուէլ անվրէպ մէկ կամ միւս կապա-  
դովկիայէն միայն, ինչ որ ուշազրաւ է։  
Մեր պատմիչն իւր «մոտացածին եղջերուաւ-  
քար» ընդունելի ընկելու համար՝ չեմ  
յուսար թէ կաշառած լինի կեսարիոյ հո-  
վուապետն այս թղթերը կերտելու

13. Եւ «Հայաստան լցեալ էր խոռ-  
վութեամբ», ոչ թէ յիշեալ եպիսկոպոսին,  
այլ առ հասարակ կաթողիկոսական խըն-  
դրոյն պատճառաւ։ Զի Ներսեսի յաջորդն  
իրաւագուրէ և ապիկար, Պապ խոտոր  
ու պառակտիչ քաղաքականութեան մը հե-  
տեղ, և եպիսկոպոսական գասն անոր  
հակառակորդ, ստիպուած պիտի ծագէն  
այդ վրդովումները։ Ա. Բարսեղ ամէն  
ճիզ կը թափէր, կը շարունակէ ինքն իսկ  
առ Տիրենս թղթին մէջ, «որպէս զի  
հաստատեցից զվաղաղութիւն յիշիսկոպո-  
սունն Հայաստանի. և զնուա՝ որպէս ի  
դէպ ի՛ հաւանեցուցից ի բաց թղողու-  
զովզորականն անփութութիւնն, և բռուն  
հարկանել զանեննզ զիտութենէ զեկեղե-  
ցեացն Ծիան։ Եւս և կանոնն ետու նոցա-  
զայնցանէ՝ յորս անփութութեամբ մեղան-  
չէին ի Հայաստան, եթէ որպէս արժան  
իցէ պատկառ կալ այնցիկ»։

Ուրեմն ձեռնադրէ միայն չէ կեսարիոյ  
հայրապետին նոր յանձնառութիւնը հան-  
դէպ Հայոց, այլ անոնց կոիններոն ալ  
միջամտել, ու բարոյականի կանոններ տալ  
անոնց, Եւ հոս ևս կ'արդարանայ լիովին  
Փաւատոս, որ կը վկայէ թէ Ներսեսի մա-  
հուամբ՝ անոր առհմանած բարեկարգու-  
թիւնը խանգարուեցան<sup>3</sup>, որով ս. Բարսեղ  
կը հարկադրէր այդ մասամբ ալ ձեռ-  
նարկներ ընկել, Եւ հայ եկեղեցին կ'ըն-  
դունի նաև անոր կանոնները. և հաւան-  
ուէն աղոնը իսկ են, զորս մեսրորեան  
լեզուով պանած՝ զարուց ի զարս ինամով  
պահէր է իւր ծոցին մէջ, և մինչեւ առ  
մեզ հասուցեր, Ռ'ըքան տարբեր կը խոր-  
էին մեր նախնից քան զմեզ, և որչափ  
անձանաշելի դարձուցեր ենք մեց այդ  
նախնիցն իրենց։

1. Ղ. 121 և 120. — 2. Գելզ. Փ. թ. 180.

3. Փաւ. 228-31.

**14. Փաւստոս՝ զիւռամիկ պաշտօնազորկ ընող կապաղովկեան ժողովին նկարագրութեան մէջ յօյժ կարելոր ակնարկ մ'ալ ունի. «Եղև, կ'ըսէ, ժողով եպիսկոպոսացն սինհոդոսին նահանգին կեսարու ատաց հայրապետին»։ Եւ «Հայրապետովս» կ'իմանայ՝ ոչ եթէ Հայոց դէմ զայրացող և նոյն ժողովը կազմող ս. թարսեղը, որոյ բացակայութիւնն անտեղի կը լինէր, այլ Հայոց նորդնտիր կաթողիկոսը, որ չէր հրաւիրուած զինք դատապարտող ժողովին։ Կը հետէկի որ կեսարիոյ նահանգային ժողովներին սովորաբար անպական կը լինէր Հայոց հայրապետն ալ, որոյ համար այդ առթիւ իւր բացակայութիւնը նշմարեկի է զարձեր պատճէն։ Եւ որովհետեւ նահանգային ժողովին անդամները նոյն նահանգին վիճակաւորներն էին միայն, ինչպէս կը հաստատեն Փաւստոս և ընդհանուր տովորութիւնը, ուրեմն Հայոց կաթողիկոսն ալ՝ որ կը մասնակցէր անոնց, նոյն նահանգի առաջնորդաց դասուն կը պատկանէր, և չէր գլուխն անկախ վիճակի մը։**

Զայս կը հաստատէ զարծեալ ս. թարսեղ մէկ նամակին մէջ՝ զրուած 372ին առ Դամասոս պապ և առ իսալիացի ու գաղիացի եպիսկոպոսուն, արիոսեան հերձուածոյն նարակման դէմ, որոյ մէջ իրեն հետ ձայնակից նշանակուած են երեսուն և մի եպիսկոպոսներ։ և ասոնց կարգին կը կարգանք նաև Խօսահետց (Յուռակ), Խօսօքոց (Խոսորվ) և Նարօտց (Ներսէս) անուններն այսպէս իրարու ցով, որոնց Հայազգի եպիսկոպոսներ են յայտնապէս, և մասնակցեր են այդ թղթին ինչորով գումարուած ժողովին։ Ցիշեալ Ներսէս անկասկած մեր ծանօթ կաթողիկոսն է, և ինց միայն կընայ լինելու որովհետև այդ անոնց մեր ցով Դ դարու մէջ միակն է, և չինց տեսներ ուրիշ ոչ մէկ աշխարհականի կամ եկեղեցականի վրայ։ Այսպէս

մեր սուրբ հայրապետն իւր եղերական մահուան տարւոյն մէջ իսկ վերջին անգամ կ'երթայ ի կեսարիա՝ իւր ստորագրութիւնը զնելու ս. թարսղի ձեռնազրին ցով, Եւ ոչ միայն նուաստութիւն չի համարիր կախութիւն այդ եպիսկոպոսապետէն, — պէսք է զիտնալ թէ միջին կամ մեր դարուս չէր ապրեր նա, — այլ մասաւանդ հիացող մ'է Գամբաց այդ մեծ հովուապետին սրբութեան, իմաստութեան ու չընաղ վարչութեան, և անոր ի կապադովկիա հաստատած գեղեցիկ կարգեն ու բարեկարգութիւնը Հայաստանի մէջ ալ կը կրկնէ<sup>8</sup>, անտարակոյս անոր թելարդութեամբ իսկ, թէպէտու իւր մեծ հոգին կարօտ չլինէր թելարդութեանց։ Խորենացին նոյնպէս կը հաստատէ անոր ընդօրինակելն յունական բարեկարգութիւնը<sup>9</sup>։

(Եարայարել)

Հ. Վ. Հանուն

## ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐՔ

### Ա. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՉԻՒՆ

(Եար. տես Բազմ. 1926, էջ 67)

Այս թարգմանիչ Յոհաննէս վարդապետն կ. Պոլսկցին, մեր Մատենազրական պատմութեան մէջ «ՀԱՌՈՎ» անունով ճանշցուածն է, որու մասին զրած եմ երեսն («ՀԱՅԻՑԱ ԱՄՍՈՒԹՅԱՑ» 1893, էջ 369)։

Ծնած է այն 17րդ զարու կէսին, քաջական աւրոպական լեզուներու, երկարատեն ապրած է Վենետիկ, ուր թարգմանած է այս գործը, և յետոյ Մարտիլիա և Ամսկերտամ ալ մալով՝ այն տեղերու նորակազմ հայ ձուլարաններու զարգացումն մեծապէս ջանապիր եղած է։

Բացի այս թարգմանութենէն, որ հրատարակուած չէ, ինցն ունի հրատարակած թարգմանութիւններ, որոնց վենետիկ և

1. Փաւս. 226. — 2. Նմ. 92. — 3. Հմմ. Գեւ. Փ. Բ. 118. — 4. Խորէն. Գ. բ.